# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-4

ք.Երևան «12» « 12 » 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Երիցյանի, (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 07.05.2019թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-4 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.9 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկները 2019թ, հոկտեմբերի 15-ից անցել են սննդի հատկացման նոր համակարգի՝ պատրաստի սննդի ձեռքբերման ծառայության, ուստի անհրաժեշտություն է առաջացել նվազեցնել մատակարարվող սննդամթերքի քանակները: Հաշվի առնելով նշվածը, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ սննդամթերքի քանակները նվազեցնել, մասնավորապես՝

1) 1200 կգ «թեյ, սև» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 300 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 711900 (յոթ հարյուր տասնմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ,

2) 2500 կգ «աղ, կերակրի, մանր» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 680 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 104720 (հարյուր չորս հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվազեցվող քանակների չափով վերացել է «թեյ, սև» և «աղ, կերակրի, մանր» ապրանքատեսակների գնման պահանջը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պայմանագրի գինը՝ կազմում 4955980 (չորս միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 14-րդ և 15-րդ չափաբաժինների աղյուսակը հաստատել նոր խմբագրությամբ՝ առանց տեխնիկական բնութագրի սյունակի (որը մնում է ամփոփոխ):

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-4 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և N1, N2 հավելվածները կազմված են 4 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | Ցիկլոիդ ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Հասցե՝ Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս, Նորքի 1 նրբ. 5 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 900011175016 | 16048550841200 |
| ՀՎՀՀ 02204739 | 00444541 |
| ՔԿ ծառայություն՝ Ա.Ղազարյան | Տնօրեն Ա. Երիցյան |
| ------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ. | ------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«12» « 12 » 2019 թ. կնքված*
*N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-4 ծածկագրով պայմանագրի*

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | չափման միավորը | միավորի գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 13 | 15421100/2 | Արևածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած) | Սախիբի ՍՊԸ ՌԴ | լիտր | 508 | 2540000 | 5000 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 2000 | 3-րդ եռամսյակ |
| | | | | | | | | | 3000 | 4-րդ եռամսյակ |
| 14 | 15863200/2 | Թեյ, սև | Օրիմի ՍՊԸ ՌԴ Հնդկաստան | կգ | 2373 | 2135700 | 900 | | 600 | 2-րդ եռամսյակ |
| | | | | | | | | | 300 | 4-րդ եռամսյակ |
| 15 | 15872400/2 | Աղ, կերակրի, մանր | Ավանի աղի կոմբինատ ՓԲԸ ՀՀ | կգ | 154 | 280280 | 1820 | | 1200 | 3-րդ եռամսյակ |
| | | | | | | | | | 620 | 4-րդ եռամսյակ |

*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն՝ Ա.Ղազարյան
/ստորագրություն/ Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
Ցիկլոիդ ՍՊԸ
Հասցե՝ Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս, Նորքի 1
նրբ. 5
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
16048550841200
00444541
Տնօրեն Ա. Երիցյան
/ստորագրություն/ Կ.Տ.

*Հավելված N 2*
*« 12 » « 12 » 2019 թ. կնքված*
*N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-4 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին` ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 13 | 15421100/2 | Արևածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած) | - | - | 1016000 | 2540000 | 2540000 |
| 14 | 15863200/2 | Թեյ, սև | - | 1423800 | 1423800 | 2135700 | 2135700 |
| 15 | 15872400/2 | Աղ, կերակրի, մանր | - | - | 184800 | 280280 | 280280 |
| | | | | | | | 4955980 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն` Ա.Ղազարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

Ցիկլոիդ ՍՊԸ
Հասցե` Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս, Նորքի 1 նրբ. 5
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
16048550841200
00444541
Տնօրեն Ա. Երիցյան
/ստորագրություն/